

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ

(1955–2021)

Ապրիլի 11-ին կեանքի 65-րդ տարում ի Տէր ննջեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի վաստակաշատ դասախօս Գրիգոր Բրուտեանը: Հանգուցեալը հայրենի գիտութեան անդաստանի բազմավաստակ մշակներից էր, որ տարիներ շարունակ իր նուիրեալ ծառայութիւնն է բերել ճեմարանի սաների կրթութեան գործում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Գրիգոր Բրուտեանը ծնուել է 1955 թուականի յունիսի 28-ին Երեւանում: 1962–1972 թթ. սովորել է Երեւանի Մուրացանի անուան թիւ 18 միջնակարգ դպրոցում: 1965–1972 թթ. սովորել է նաեւ Արմէն Տիգրանեանի անուան մանկական երաժշտական դպրոցում: 1973–1978 թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: Ուսումնառութեան վերջին տարիներին աշխատել է նոյն համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնում որպէս լաբորանտ: Ուսումնառութեան աւարտից անմիջապէս յետոյ աշխատանքի է անցել Բիւրականի աստղադիտարանում: Երկար տարիներ աշխատել է աստղերի եւ միգամածութիւնների ֆիզիկայի բաժնում՝ սկզբում որպէս աւագ լաբորանտ, ապա՝ կրտսեր գիտաշխատող եւ գիտաշխատող: Զբաղուել է բռնկուող աստղերի ուսումնասիրութեամբ, գործուն մասնակցութիւն է ունեցել աստղադիտարանում ընթացող դիտողական ծրագրերին: Սկսեալ 1982 թուականից՝ աստղաֆիզիկական աշխատանքին զուգընթաց՝ զբաղուել է նաեւ

հայկական օրացոյցին վերաբերող խնդիրներով։ 1992–2002 թթ. Բիւրականի աստղադիտարանում եղել է հայկական օրացոյցների հետազօտութեանը նուիրուած գիտական թեմայի ղեկավար։ 1999 թուականից աշխատել է նաեւ Վիկտոր Համբարձումեանի նորաբաց տուն-թանգարանում, իսկ 2000 թուականից այդ թանգարանի տնօրէնն էր։ 2004 թուականին պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն եւ ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան։ 2005 թ. սկսեալ՝ «Տոմարագիտութիւն» առարկան է դասաւանդել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանում, ինչպէս նաեւ Երեւանի պետական համալսարանում ու Մխիթարեան ճեմարանում։ 2008 թուականին ազատուել է Բիւրականի աստղադիտարանի աշխատանքից։ 2009 թուականից, Վ. Համբարձումեանի տուն-թանգարանում իր պաշտօնավարութեանը զուգահեռ, աշխատանքի է անցել Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում։

Գրիգոր Բրուտեանի տոմարագիտական ուսումնասիրութիւններերի հիմնական ոլորտը հայկական հին եւ հնագոյն օրացոյցների դաշտն էր։ Նա ճշգրտել է հայոց Հայկեան օրացոյցի սիզբը՝ ն. Ք. 2341 թ., հայոց հնագոյն Ամանորի՝ Նաւասարդի տօնի դիրքն արեւադարձային տարուայ մէջ (ամառնամուտից 8 օր առաջ), ի յայտ է բերել հայոց հնագոյն՝ Նախահայկեան օրացոյցը՝ իր ուրոյն կառուցուածքով, որոշ ճշգրտումներ է կատարել հայկական միջնադարեան օրացոյցների վերաբերեալ (մասնաւորապէս՝ Անանիա Շիրակունու Տոմարի հետ կապուած), ճշգրտել է Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը եւ այլն։ Բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւնների հեղինակ է։